յանը կարգալույծ էր հռչակվել՝ հոգեւոր ծառայությունն ինքնակամ լքելու համար: Նկատի ունենալով Նշան (Տ. Խորեն աբեղա) Հովհաննիսյանի ներկայացրած զղջման գիրը՝ Ամենայն Հայոց Հայրապետն ընդառաջեց նրա խնդրանքին եւ սահմանեց մեկամյա ապաշխարության շրջան Ս. Գեղարդավանքում, որի բոլորումից հետո արտոնեց նրա վերականգնումը կուսակրոն քահանայության կարգի մեջ:

Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանն իր ծառայությունը պիտի բերի՝ իբրեւ հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի կառավարիչ:

ՑԱՎԱԿՑԱԳԻՐ ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

Ապրիլի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Հռոմի Սրբազան Քահանայապետ Բենեդիկտոս ԺԶ Պապին՝ Կենտրոնական Իտալիայում տեղի ունեցած սոսկալի երկրաշարժից զոհվածների համար:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեր սրտակցությունն ու աջակցությունն ենք բերում Ձեզ դժվարին այս պահին՝ հայցելով Տիրոջ զորակցությունը բոլոր տուժածներին՝ շուտափույթ հաղթահարելու փորձություններն ու դժվարությունները, ինչպես նաեւ Ս. Հոգու մխիթարությունը զոհվածների հարազատներին», - ասվում է Նորին Սրբության ցավակցագրում:

ՈՏՆԼՎԱՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՌԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ապրիլի 9-ին՝ Ավագ հինգշաբթի օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ՝ ի հիշատակ մեր Տիրոջ՝ Վերջին ընթրիքի եւ Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը:

Նույն օրը ժամը 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հանդիսավոր թափորով առաջնորդվելով Մայր Տաճար, կատարեց Ոտնլվայի արարողություն: Արարողության ժամանակ ընթերցվածքներին, աղոթքներին եւ շարականների երգեցողությանը հաջորդեց յուղի եւ ջրի օրհնությունը:

Այնուհետեւ Փրկչի օրինակով Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծնրադիր լվաց եւ յուղով օծեց վեց եկեղեցականների, չորս զինվորականների եւ երկու ուսանողների ոտքերը:

Վերջում օրհնված յուղը բաշխվեց արարողությանը ներկա բարեպաշտ ժողովրդին: